ՏԱԹԵՎ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեմա՝

«Երաժշտություն» առարկայի ճանաչողական և դաստիարակչական դերը հանրակրթական դպրոցում

Հետազոտող ուսուցիչ ՝ Գյուլնազարյան Գոհար

Պեյո Յավորովի անվ. թիվ 131 դպրոց

ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն□□3

Երաժշտության ազդեցությունն անհատի ներաշխարհի վրա□□□□□□□□□□□□4

Երաժշտության հոգեբանադաստիարակչական նշանակությունը□□□□□□□□6

Երաժշտության ընկալումը. 13

Եզրակացություն. 17

Գրականության ցանկ. 18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Երաժշտությունը բոլոր ժամանակներում իր ուրույն տեղն ու դերը ունի մարդու կյանքում: Այն մշապես ուղեկցում է մեզ, թե ուրախության, թե տխրության պահերին: Թերևս սա է պատճառը, որ ցանկացանք նշել նրա կարևորությունը մեզանում: Բարձր արժևորելով «Երաժշտություն» առարկայի դերը, կարողանալ իրագործել նրա հիմնական նպատակները ու խնդիրները՝ ձևավորել սովորողների երաժշտական լայն աշխարհայացքը՝ զուգակցված բարոյագեղագիտական բարձր նպատակներով: Քանզի նմանօրինակ մոտեցում կօգնի ձևավորել բարձր գեղագիտական ճաշակ:

ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՀԱՏԻ ՆԵՐԱՇԽԱՐՀԻ ՎՐԱ

Մարդիկ դեռ հազարավոր տարիներ առաջ գիտեին մարդու վրա երաժշտության ազդեցության մասին: Սակայն, աշխատելով երաժշտությամբ, հարկ է հիշել, որ այն «դեղից» կարող է վերածվել «զենքի», քանի որ մենք անկարող ենք նրա առաջ: Երաժշտությունը ազդում է ուղեղի ամենախորը կառուցվածքի վրա, փոխելով գիտակցության վերահսկողությունը: Երաժշտության չմտածված կիրառումը մարդու վրա կարող է ունենալ կործանիչ և անկանխատեսելի հետևանքներ:

Երաժշտությունը կարող է ուղեկցվել հոգեբանական ցանկացած գործընթացում, և կարող է կիրառվել հենց իրենով՝ որպես դեղամիջոց: Երաժշտությունը ֆենոմենալ երևույթ է: Նրա փոխհարաբերությունը մարդու հետ զարմանալի է: Մեղեդային ձայները հրաշքներ են գործում մարդու հոգեվիճակի վրա, բարձրացնում է նրա տրամադրությունը, տիրում է նրա հույզերին, հաղթում է նույնիսկ ֆիզիկական ցավին: Երաժշտությունը ոչ-խոսակցական միջոց է: Այն ազդեցիկ է բոլորի համար, քանի որ ամեն մարդ գոնե երաժշտության մի ոճով հետաքրքրված է: Երաժշտությունը ազդեցիկ է, քանի որ ոգեշնչող բնույթ ունի և քաջալերում է ու եռանդ է առաջացնում: Գիտականորեն հաստատված է, որ երաժշտությունը կարող է հոգեբանադաստիարակչական մեծ դեր խաղալ:

Արևելքի գիտնականները եկել են այն համոզմանը, որ մեղեդիներն ունեն ուժեղ ազդեցություն մարդու հոգեկան աշխարհի վրա՝ հոգևոր կրոնական երաժշտությունը վերականգնում է հոգեկան հավասարակշռությունը, տալիս է հանգստության զգացում: Ուրախ երաժշտությունը բարձրացնում է մարդու տրամադրությունը ակտիվությունը:

Դեռևս Հին Հունաստանում և այլ երկրներում էր հայտնի, որ երաժշտությունը կարող է փոխել մարդու հոգեկան և ֆիզիկական վիճակը: Երաժշտության միջոցով կարելի է հանել զայրույթն ու վիրավորանքը, բարձրացնել տրամադրությունը: Երաժշտությունը համաշխարհային երևույթ է և ամեն մարդու կյանքում ունի իր ուրույն տեղը : Երբ կազմակերպվում են հատուկ նպատակով հավաքներ, միջոցառումներ ու մրցումներ, միանալու նպատակով կամ հիշելու համար նույն նպատակը, հնչում են երգեր , որոնք ավելի է ոգևորում խմբի անդամներին: Երբ ուզում ենք սովորել կամ սովորեցնել ինչ-որ առարկա կամ տառերի ու թվերի շարան, ավելի հեշտ ենք այն անգիր սովորում, եթե այն ունենում է երաժշտականություն: Երաժշտությունը հանգստացնող բնույթ ունի, այն ցանկացած աշխատանքի ժամանակ խաղաղեցնում է մարդուն: Գիտնականների կարծիքով, երաժշտական արվեստի հիմնական արժեքը կայանում է նրանում, որ թույլ է տալիս մարդկանց արտահայտվել նույնիսկ այն իրավիճակներում, երբ նրանք խոսքեր չեն գտնում ներքին ապրումներն արտահայտելու համար: Հայնեն ասել է այդ մասին «Այնտեղ որտեղ արատվում են խոսքերն, սկսվում է երաժշտությունը»: Երաժշտությունն ունի լայն ու ընդարձակ սահմաններ և օգտակար է ինչպես երեխաների, այնպես էլ դեռահասների, երիտասարդների ու տարեցների համար:

Հոգեբանները ցույց են տվել տարաբնույթ մեղեդիների համապատասխան ազդեցությունը մարդու հոգեկան ներաշխարհի վրա: Երաժշտության միջոցով հեշտանում է մարդկանց հաղորդակցումը միմյանց հետ: Երաժշտության առաջացրած դրական հույզերն ուժեղացնում են հիշողությունը, դրդում կենտրոնական նյարդային համակարգի գործունեությունը: Գիտնականները նկատել են երաժշտության ընտրողական ազդեցությունը՝ կախված կատարվող ստեղծագործության բնույթից և գործիքից, այսինքն յուրաքանչյուր նվագարանի տեմբր ունի իր ուրույն ազդեցությունը, մարդու և՛ հոգեկանի, և՛ ֆիզիկականի վրա: Այսպես, օրինակ, կլարնետն ազդում է արյան շրջանառության վրա, ջութակն ու դաշնամուրը հանգստացնում են նյարդային համակարգը, ֆլեյտան ունի թուլացնող ազդեցություն: Երաժշտությունը օգնում է լինել սթափ, ուշադիր և կենտրոնացնում է երեխաների ուշադրությունը:

ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Կանադացի երաժշտագետ՝ Կարլ Օրֆը երաժշտության ուսուցման համար ունի մեթոդիկա, որը նպատակահարմար է կիրառել երեխաների երաժշտական դաստիարակության և կրթության գործում: Օրֆի փիլիսոփայության հիմքն՝ ուսումնական սկզբունքներն են: Այստեղ երեխաները սովորելուն զուգահեռ, փուլ առ փուլ առաջ են գնում, գյուտ են անում, ստեղծագործում: Նրա մեթոդիկայում մեծ տեղ է զբաղեցնում երաժշտառիթմիկ շարժումները: Օրֆի մեթոդիկայում, նոտաների արժեքից առավել, շեշտը դրվում է բառերի ռիթմի վրա: Օրֆի մեթոդը երաժշտության, շարժման, խոսքի ու երգի միաձուլում է, որը երեխաներին հաճույք պարգևելու կողքին, ի հայտ է բերում նրանց յուրատահուկ ընդունակությունները: Դրա հիմքն է ֆոլկլոր ու ազգային երաժշտությունը : Օրֆի մեթոդիկան թարգմանվել է 18 լեզուներով: Նրա մեթոդը կիրառելի է և՛ երեխաների, և մեծահասկաների համար:

Դպրոցում դասավանդվող առարկաների շարքում շատ «համեստ» տեղ է հատկացված «Երաժշտություն» առարկային:

Մինչդեռ այն հանդիսանում է այն միակ «դարպասը» որտեղով աշակերտները մուտք են գործում երաժշտական արվեստի զարմանահրաշ ու հարուստ աշխարհը: եվ չնայած իր «համեստ» կարգավիճակին, դժվար է

պատկերացնել դպրոցական կյանքը առանց երաժշտության՝ ցերեկույթներ, հանդիպումներ, միջոցառումներ, ներկայացումներ։

Ահա ինչպես էր բնութագրում հայոց մեծ բանաստեղծ Հ. Թումանյանը երաժշտարվեստի հզոր ուժը։ «Բանաստեղծը միայն մարմին է տալիս իր մտքերին ու զգացմունքներին և իր ոգևորություններով կենդանության շունչ է տալիս բանաստեղծությանը, որ նա ապրի մշտապես, բայց որ թռչի, դրա համար թևեր են հարկավոր, իսկ թևեր առնել նա կարող է միմիայն էն կախարդական աշխարհքում, որ կոչվում է երաժշտություն»։

Երաժշտությունը՝ (музыка), որ միայն հայերենով է այդպես հնչում, նշանակում է մուսաների արվեստ, ստեղծում է մի ներդաշնակ աշխարհ, այն ընկալողը հաղորդակցվելով այդ ներդաշնակության հետ, աշխարհը տեսնում է ներդաշնակ և կարգավորված։ Այսինքն երաժշտությունը մարդու մտքերում և զգացմունքներում, նրան նույնպես դարձնում է ներդաշնակ։ Երաժշտական արվեստը ծնվելով իրականությունից այն իր վրա է կրում մարդկային պատմության ողջ ընթացքը կրելով ժամանակի շունչը, պատմական իրադարձություններն, սոցիալ-տնտեսական իրավիճակը, որոնք էլ ծնվում են երաժշտական ստեղծագործություններից։ Երաժշտությունը մարդուն ուղեկցում է իր ողջ կյանքի ընթացքում։

«Ոչ մի այլ միջոց չի կարող ավելի արդյունավետ խրախուսել կրթությունը և լուսավորությունը, քան գեղեցիկի արվեստները՝ պոեզիան, երաժշտությունը և գեղանկարչությունը» ասել է Խ. Աբովյանը։ Իսկ գերմանացի մեծ բանաստեղծ Գյոթեն երաժշտությունը համարում է մարդու համար եզակի աստվածային շնորհ։

Այո, երաժշտությամբ կարելի է բնութագրել մարդու զարգացման մակարդակը, նրա մտքերը ու հույզերը, աշխարհայացքը։ Իսկ այդ ամենի ճիշտ ձևավորման գործում իր մեծ դերն ունի երաժշտություն առարկայի նպատակների ու խնդիրների իրագործումը։

Երաժշտական արվեստի հանդեպ սիրո և հետաքրքրության առաջին ծիլերը դրվում են նախակրթարաններում, իսկ այն ավելի ամուր հիմքերի վրա դնելու խնդիրը իրականացվում է հանրակրթական դպրոցի երաժշտության դասերի ընթացքում։ Երեխաների երաժշտական դաստիարակության հիմքում ընկած է աստիճանականության սկզբունքը, որը նրանց տանում է երաժշտական արվեստի զարմանահրաշ և մեծ աշխարհ։ Այդ աշխարհը սկսվում է հանճարեղ Կոմիտասի անկրկնելի երգերի մեղեդիներով, Ալ. Սպենդիարյանի քնարական հնչյուններից, Ա. Տիգրանյանի մեծ ժողովրդականություն վայելող «Անուշ» օպերայի նախերգանքից, Ա. Խաչատրյանի հզոր և հարուստ հնչողությամբ բալետներով, հայ կոմպոզիտորական դպրոցի մեծ ու փոքր կտավի ստեղծագործություններից, տանելով նրանց դեպի ռուսական և եվրոպական արվեստի երաժշտության գանձարանը։

Երաժշտական արվեստի խոսքը թափանցելը սկսվում են ամենապարզ քայլերից՝ երաժշտության ունկնդրումից և նրա տեսակները տարբերակելու կարողությունից։

Ծանոթանալով երաժշտության տեսակների հետ, երեխան հասկանում է, որ երաժշտությունը անբաժանելի է այն կյանքից որում ինքն է ապրում։ Որովհետև ունկնդրվող ստեղծագործությունները, կամ ուսուցանվող երգերը կապված են դպրոցի, շրջապատի մարդկանց, տարվա

եղանակների և իրադարձությունների հետ, քանի որ արտահայտում և նկարագրում են նրանց բնավորության գծերը և շրջապատի երևույթները։

Երկրորդ դասարանում էլ ավելի մոտիկից ծանոթանալով երաժշտության երեք տեսակների և նրանց տարատեսակների հետ, երեխաները համոզվում են, որ երաժշտությունը երաժշտական լեզվի արտահայտչամիջոցների և դրանց հնարավորությունների միջոցով կարող է արտահայտել հույզեր, հոգեվիճակներ, տրամադրություն, նկարագրել և վերարտադրել բնության պատկերներ և այլն։

Դեպի երաժշտության մեծ աշխարհ մուտք գործելու մեծ հնարավորություն և կապ են ստեղծում երաժշտության երեք տեսակների իմացությունը, որի շնորհիվ ծանոթանում են օպերա, բալետ, սիմֆոնիա անվանումներին և ծանթանում այդ ժանրերին։

Առաջին և երկրորդ դասարանների ձեռք բերած երաժշտական փորձի հիման վրա երեխաները ավելի ինքնուրույն վերաբերմունք են ցուցաբերում ունկնդրվող ստեղծագործությունների և ուսուցանվող երգերի հանդեպ, որը նպաստում է նրանց երաժշտական կարողությունների զարգացմանը և ակտիվ ընկալմանը։

Երաժշտական թեմաների տրամաբանական կապի և աստիճանական կապի զարգացման շնորհիվ երրորդ դասարանի աշակերտները ծանոթանալով «Ինտոնացիային» հեշտությամբ խորանում են երաժշտական ստեղծագործության կառուցվածքի (ձևի) վերլուծության մեջ։

Հենվելով երեխայի առաջին երեք տարիների ձեռք բերած երաժշտական գիտելիքների վրա, չորրորդ դասարանում անչափ

կարևորվում է ազգային երաժշտական լեզվի հետ ծանոթանալը, որը շատ ամուր կապվում է հայ հանճարեղ երգահան՝ Կոմիտասի անվան հետ։ Կոմիտասը հայ ազգային կոմպոզիտորական դպրոցի հիմնադիրն է։ Հիմնվելով արևմտաեվրոպական երաժշտության զարգացման փորձի ու հայ կոմպոզիտորական դպրոցի ձեռքբերումների վրա և հետազոտելով հայ ավանդական երաժշտության առանձնահատկությունները՝ նա ստեղծեց կոմպոզիտորական ուրույն ոճ, որը համաշխարհային երաժշտության պատմության մասշտաբով ինքնատիպ է և չկրկնվող։ Կոմիտասի երաժշտության հարմոնիկ ու պոլիֆոնիկ դրսևորումները և ֆակտուրային շարադրանքի մոտեցումները երաժշտագիտական ընդունված բնորոշումների որևէ դասակարգման չեն ենթարկվում։ Կոմիտասի ստեղծագործական ժառանգությունն ընդգրկում է հայկական ժողովրդական ու հոգևոր երգերի մշակումներ և ժողովրդական սկզբնաղբյուրից անկախ (հեղինակային) գործեր։ Մշակումները նույնպես ընդունված է համարել ստեղծագործություններ՝ նկատի ունենալով կոմպոզիտորական ինքնատիպ մոտեցումը։ Կոմիտասը դասավանդել է Գևորգյան ճեմարանում, ապա նաև մասնավոր դասեր է վարել Կոստանդնուպոլսում։ Կոմիտասը ցանկություն ուներ Կոստանդնուպոլսում երաժշտանոց հիմնել։ Ցավոք, նա նպատակը չհասցրեց իրականացնել, սակայն նա հասցրեց կրթել երիտասարդ, շնորհալի սերունդ, որոնցից ոմանք հայ երաժշտության բնագավառում կարևոր դեր խաղացին։ Կոմիտաս թեման շարունակվում է նաև հինգերորդ դասարանում։ Աշակերտները ճանաչում են արվեստի տեսակները, որից հետո «Երաժշտությունը և գրականությունը» թեմայի շրջանակներում

սովորում «Կաքավիկ» երգը։ Այս ամենից զատ հինգերորդ դասարանում աշակերտները ավելի խորը կերպով ծանոթանում են երաժշտության խոշոր ժանրերին, ինչպիսիք են՝ օպերան, բալետը և սիմֆոնիան։ Վեցերորդ դասարանում աշակերտները հնարավորություն են ունեն համադրել հայկականը եվրոպականի հետ, փորձելով նկատել, բացահայտել և քննարկել նրանցում եղած նմանությունները և տարբերությունները։ Այս նյութը հիմք է ստեղծում յոթերորդ դասարանի ծրագրային նյութի համար։ Սովորողները տարբերակում են «Դասական» և «Հանրամատչելի» երաժշտության տեսակները և ընկալման առանձնահատկությունները։ Հարկ է նշել, որ յոթերորդ դասարանում յուրաքանչյուր աշակերտ կարողանում է գտնել իրեն հոգեհարազատ ժանր։ Համաձայն ծրագրի, աշակերտները ուսումնասիրում են՝ դասական, հանրամատչելի, ժողովրդական, ջազային, իմպրովիզացիոն և ռոք ժանրերը։ Նման բազմազանության մեջ անհնար է չգտել հոգեհարազատը։ Այսպիսով, վերոհիշյալ օրինակները և մեջբերումները փաստում են, որ «Երաժշտություն» առարկայի շրջանակներում սովորողների մետ ձևավորվում է գեղագիտական ճաշակ, նրբազգացություն, գեղեցիկը ընկալելու կարողություն և ամենակարևորը գեղեցիկը ստեղծարար ձևով ստեղծելու հմտություն։

ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԸՆԿԱԼՈՒՄԸ

Ըստ ռուս երաժշտագետ Բ. Ասաֆևի՝ «Երաժշտությունը իրականության կերպարահնչյունային արտացոլումն է», նրանում հնչում է կենդանի խոսք՝ հուզված կամ հանգիստ զրույց, դիմում, կոչ, հարց ու պատասխան:

Մարդկության զարգացմանը զուգահեռ երաժշտությունը ձեռք է բերում հատուկ նշանակություն, երբ խոսք է գնում անհատի հոգեկան աշխարհի կամ մի ամբողջ մշակույթի մասին, երաժշտությունը հանդես է գալիս որպես այդ մշակույթը բնութագրող, բացահայտող և ներկայացնող խորհրդանիշ:

Երաժշտության կարևորագույն առանձնահատկությունն այն է, որ այն մարդու զգայարանների վրա թողնում է անմիջական և ուժեղ ազդեցություն: Ահա թե ինչպես է արտահայտվել երաժշտության ազդեցության մասին մեծ Կոմիտասը. «Մեկ հասկացված, անկեղծ ձայն հազար ճառ կարժե, որովհետև ճառը պետք է մարսե հասարակությունը, որ կարենա անկե սնունդ առնել, ինչ-որ ժամանակներու գործ է: Իսկ ձայնը վայրկյանին մեջ կթափանցե մարդու կուրծքեն ներս և այնտեղ կհիմնե զգացման և մտքի վառարան»:

Երաժշտությունը, որպես ուսումնական առարկա, կարևոր դեր ունի երեխայի՝ իբրև մարդ-անհատի ձևավորման և զարգացման վրա տարբեր՝ գաղափարական, կամային, մտավոր, ստեղծագործական, բարոյական,

գեղագիտական, հուզական որակներով: Երաժշտական կրթությունը ուսումնական գործընթաց է, որն ուղղված է այն կարողունակությունների ձևավորմանը, որոնց միջոցով զարգանում է ակտիվ, անհատական մոտիվացիայով սովորող, որը ընդունակ է ինքնակրթվել և ամբողջ կյանքում պահպանել հետաքրքրությունը բարձրակարգ երաժշտության և ընդհանրապես արվեստի նկատմամբ: Այն նպաստում է նաև սովորողի մտահորիզոնի ընդլայնմանը, երևակայության, ստեղծագործական և վերլուծական մտածողության զարգացմանը, գեղագիտական և բարոյական չափանիշների, հայրենասիրական և մարդասիրական զգացումների ձևավորմանը, ինչպես նաև կյանքի, շրջապատող աշխարհի նկատմամբ ստեղծագործական վերաբերմունքի դրսևորմանը: Երաժշտություն առարկայի չափորոշիչը և ծրագիրը ստեղծվել է ՀՊՉ-ի կարողունակություններին և վերջնարդյունքներին համապատասխան:

Երաժշտության ունկնդրումը և ընկալումը բարդ գործընթաց է, որովհետև այն կախված է յուրաքանչյուր անհատի ներքին զգացողությունից, որը բացահայտելը, ձևավորելը և զարգացնելը բավականին դժվար է: Այն զարգացնում է ունկնդրելու կարողությունը, ուշադրությունը, վերլուծական ընդունակությունները և համեմատելու կարողությունը: Երաժշտության ունկնդրման միջոցով սովորողը ծանոթանում է նաև երաժշտության պատմությանը, ուսումնասիրում է ունկնդրվող ստեղծագործության ստեղծման պատմական ժամանակաշրջանը, կոմպոզիտորի ստեղծագործական գործունեության առանձնահատկություններն և այլն: Սովորողը հասկանում է, որ ունկնդրել չի նշանակում միայն լսել, պետք է ներկայացնել, մեկնաբանել,

վերլուծել, երաժշտությունից ստացած տպավորությունները, դրսևորել հուզական արձագանք, ինքնուրույն կարծիք հայտնել, մենակ կամ խմբով ներկայացնել ուսումնասիրություններ, հետազոտական կամ նախագծային աշխատանքներ և այլն:

Անհատական և խմբային երգեցողությունը երեխաների ամենասիրելի գործունեության տեսակն է, որի ընթացքում զարգանում է նրա լսողությունը, ռիթմի ու լադի զգացողությունը: Երգեցողությունից է երեխան ստանում իր առաջին երաժշտական տպավորություններն ու զգայական ընկալումը: Սկսած առաջին դասերից՝ պետք է սովորեցնել երեխաներին ճիշտ երգեցողության կանոնները՝ ձայնի դրվածք, շնչառություն, բառերի հստակ արտասանություն, մաքուր ինտոնացիա և այլն: Խմբային երգեցողության միջոցով ձևավորվում և զարգանում է սովորողների երգչային ձայնածավալը, ճիշտ շնչառությունը, ձայնակազմությունը, առոգանությունը, մաքուր ինտոնացիայով միաձայն (ունիսոն) և երկձայն երգելու կարողությունը, անսամբլային զգացողությունը, որը հիմքեր է նախապատրաստում հետագայում խմբերգային երգեցողության համար: Խմբային երգեցողությունը զարգացնում է նաև մի շարք բարոյական արժեքներ՝ բարություն, ընկերասիրություն, հանդուրժողականություն, միասնականություն, մեկը մյուսին լսելու, սեփական պարտականությունների նկատմամբ պատասխանատու վերաբերմունք դրսևորելու կարողությունը: Տարրական դպրոցում սովորողները ծանոթանում են նաև ձեռքի նշաններով երգեցողությանը. այն զարգացնում է սովորողների երաժշտալսողական պատկերացումները: Ձեռքի նշանները

նախապատրաստում են նաև միաձայնությունից անցումը բազմաձայն երգեցողությանը:Դեռևս 17-րդ դարում գերմանացի փիլիսոփա, բնագետ Աթանասիուս Կիրհերը գտնում էր, որ աշխարհում գոյություն ունեցող ամեն բան կապված է մյուսին անտես թելերով, և համայնական միասնականության այդ մոտեցումը կոչեց «հոլիզմ», որի ամ-բողջականությունը ապահովվում է ներդաշնակության օրենքով՝ բացահայտելով այդ կապերը տիեզերական մեգամարմինների օրենքներով, ընդհուպ քննարկելով դրա դերը մարդու միկրոհամակարգի վրա [3]:

20-րդ դարի նախասկզբին երաժշտության հոգեբանական, մանկավարժական,համակցված կիրառությունները հետաքրքիր գիտափորձերի և հետևությունների արդյունք դարձան: Երաժշտական հնչյունի հաճախականությունը, տեմբրը, երաժշտական տոների ծավալները քննվում են իբրև ակտիվ կենսաբանական չափանիշներ, որոնց թողած ազդեցությունները, հատկապես հարմոնիկ երաժշտության մեջ, իբրև համարվում են հուզական լիցքաթափման միջոցներ: Այսինքն՝ ներդաշնակության օրենքներին համապատասխանեցված երաժշտութ-յունն օգնում է հուզական զարգացմանն ու աճին, որոնք նպաստում են, որ ֆիզիկական երևույթից ձայնը փոխակերպվի հոգեկան երևույթի:

Լսելը ունկնդրելու, իսկ այնուհետև ընկալելու գործընթացի առանցքն է կազմում, որի արդյունքում դասական երաժշտության ունկնդրման արդյունքում երեխայի մոտ հարստանում են հուզական պրոցեսները, առաջացնելով տարբեր տրամադրություններ: Երաժշտությունը մեծ դեր է խաղում երեխայի աշարհճանաչողության գործընթացում :

Վալդորֆյան դպրոցների հիմնադիր Ռ. Շտայների կարծիքով արվեստի ճյուղերից միայն երաժշտությունն է, որ լսողության շնորհիվ ներս է մտնում մարդու հոգեկան աշխարհ և այլևս դուրս չի գալիս՝ թողնելով այնտեղ խորը հետքեր: Նրա առաջարկած ռիթմիկ համաչափությունը երաժշտության, խոսքի, մարմնի շարժման համակցությունն էր, որ կոչվում էր էվռիթմիա: Մարմինը նյարդաթելի պես «ուրվագծում է» անլսելի ուլտրաձայնը ինֆրաձայների ազդեցության տակ: Երաժշտության համապատասխան ազդեցությունից շարժումները ծնվում են տվյալ պահին, «հոսում են» մարդու ներսից, հոգու, մտքի խորքերից, մարդը ազատագրում է ինքն իրեն իր ստեղծած հոգսերի, մտածումների կապանքներից: Ծնվում է ստեղծագործողի ազատությունը: Այսպես ընդգծվում է երաժշտության ազդեցությունը մարմնաշարժողական համակարգի վրա:

Գերմանացի մանկավարժ, կոմպոզիտոր Կարլ Օրֆը [1, էջ18-23] գտնում էր, որ երաժշտության միջոցով կարելի է զարգացնել երեխայի ընկալման, յուրացման գործընթացները, օգնել երեխային ինքնաճանաչման, սեփական անձը սիրելու, հասկանալու, առանձահատկությունների հետ հաշվի նստելու հարցում: Տարրական դասարանների երեխաների համար նվագելու, երգելու, պարելու միջոցներով երեխայի համար ստեղծվում են խաղային նոր իրավիճակներ, ինչի միջոցով խթանվելու էին երեխայի ստեղծագործականությունը, իմպրովիզացիաներ անելու կարողությունը: Գործունեության հաջորդ ձևը անհատական ստեղծագործում կամ իմպրովիզացիա է, որի գլխավոր նպատակը սովորողների ստեղծագործական ունակությունների զարգացումն է: Իմպրովիզացիայի բոլոր միջոցները երեխաների մեջ զարգացնում են գեղարվեստական երևակայություն, ինքնուրույնություն, նպատակին հասնելու ձգտում, բարձրացնում երաժշտական գործունեության ակտիվությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հանրակրթական դպրոցում դասավանդվող «Երաժշտություն» առարկայի շնորհիվ սովորողները բոլոր երաժշտատեսական գիտելիքները ձեռք են բերում երաժշտությամբ գործնականորեն զբաղվելու ընթացքում, ծանոթանում են երաժշտության մեջ դրանց կիրառմանը:

Շատ կարևոր է նաև սովորողների երաժշտագեղագիտական ճաշակի և մտահորիզոնի ձևավորումը, որը պետք է իրականացվի ուսումնական էքսկուրսիաների՝ (այդ թվում նաև վիրտուալ) համերգասրահներ, թանգարաններ, թատրոններ այցելության ընթացքում, դրանք կարելի է իրականացնել ակտիվացնելով թանգարանների կրթական ծրագրերի հետ համագործակցությունը: Սովորողի կյանքում կարևոր տեղ է գրավում նաև դպրոցական համերգների կազմակերպումը, որը ձևավորում է երաժշտություն ունկնդրելու սովորություն և միջոցառումներ կազմակերպելու փորձ:

Ուսումնական գործունեությունը մի ամբողջական գործընթաց է, որի մեջ հավասարապես ներկայացվում են գործունեության տարբեր ձևեր: Թե ինչ ծավալով և ինչ ձևերով կկիրառվեն դրանք,կախված է դասի նպատակից, խնդիրներից և տիպից:

Կարևոր է նկատի ունենալ, որ սովորողների գեղարվեստական հմտությունների զարգացումն ու արժեքային համակարգի ձևավորումը դիտվում են որպես բոլոր թեմաների ուսուցմանն ուղեկցող խնդիրներ:

Արվեստը հասկանալու բանալին առօրեականի և գեղարվեստականի փոխհարաբերության ընկալումն է, սովորողը արվեստի առարկաների դասավանդման ընթացքում իր ստացած գիտելիքների, ձևավորված հմտությունների, վերաբերմունքի և արժեքների շնորհիվ պետք է հասկանա, ընկալի, թե ինչպես է առօրեականը արվեստի միջոցով դառնում կատարյալ, այսինքն՝ գեղարվեստական:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Երաժշտություն առարկայի չափորոշիչ և ծրագիր, Երևան, 2012
2. Մազմանյան Մ., Երաժշտության դասավանդման մեթոդիկա, Երևան, 1969
3. Յուզբաշյան Յու., Փահլևանյան Ա., Երաժշտությունը առաջինից չորրորդ դասարաններում, Երևան, 2001
4. Յուզբաշյան Յու.Վ., Վեյս Պ. Ֆ., Կրտսեր դպրոցականների երաժշտական մտածողության զարգացումը, Երևան,1982
5. Յուզբաշյան Յու.Վ., Նոտագրության ուսուցումը հարաբերական և բացարձակ մեթոդներով, Երևան, 1972
6. Քուշնարյան Քր., Հայ մոնոդիկ երաժշտության պատմության և տեսության հարցեր: Երևան, 2008
7. Ветлугина Н. А. — Музыкальное развитие ребенка. М., 1968
8. «Հայ երաժշտության պատմություն» Ա.Բարսամյան, Մ. Հարությունյան1996թ.,
9. . «Երաժշտությունը 1-4-րդ դասարաններում» Ուսուցչի մեթոդական ձեռնարկ Յու. Վ. Յուզբաշյան, Ա. Ա. Փահլևանյան, Վ. Ի. Ավետիսյան
10. Д. Кабалевский, Избранные статьи о музыке Москва 1963
11. «Երաժշտական բացատրական բառարան» Կ. Ե. Մելիք-Վրթանեսյան, Մ. Ա. Տոնյան Երևան 1989թ.,